Digitally signed by GHAZARYAN HOVHANNES 1404750070
Date: 2023.05.08 11:00:07 AMST

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/2620/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԸ
ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՔՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

05 մայիսի 2023 թվական քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, նախագահությամբ դատավոր Հովհաննես Ղազարյանի, ծանոթանալով «ԲԵՍՏԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ մասնակի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով, Երևանի քաղաքապետի պաշտոնակատարի 10.04.2023 թվականի թիվ 770-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումին և կից փաստաթղթերին, քննարկելով հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

28.04.2023թ.-ին ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում (այսուհետ՝ նաև Դատարան) մուտքագրվել է «ԲԵՍՏԻՆ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ նաև Հայցվոր) անունից ներկայացված հայցադիմումն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ մասնակի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով, Երևանի քաղաքապետի պաշտոնակատարի 10.04.2023 թվականի թիվ 770-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջով:

Դատավորի աշխատակազմին գործը հանձնվել է 02.05.2023թ.-ին:

Հայցվորի ներկայացուցիչը Դատարանին խնդրել է մասնակի՝ «ԲԵՍՏԻՆ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով, անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի պաշտոնակատարի 10.04.2023 թվականի թիվ 770-Ա որոշումը:

Դատարանը փաստում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջներին

համապատասխան, նույն օրենսգրքի 24-րդ հոդվածի 3.1-րդ մասով և 27.2 գլխով սահմանված կանոնների պահպանմամբ:

Հաշվի առնելով այն, որ հայցադիմումը վերադարձնելու կամ դրա ընդունումը մերժելու հիմքերը բացակայում են, Դատարանը գտնում է, որ հայցադիմումը պետք է ընդունել վարույթ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

Հաշվի առնելով այն, որ հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծելու պահի դրությամբ օրենքով սահմանված բացառություններ առկա չեն, Դատարանը գտնում է, որ գործը պետք է քննել գրավոր ընթացակարգով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական ժամկետները հաշվարկվում են տարիներով, ամիսներով, շաբաթներով և օրերով: Օրերով հաշվարկվող ժամկետներում չեն ներառվում օրենսդրությամբ նախատեսված ոչ աշխատանքային օրերը:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածներով, նույն օրենսգրքի 27.2 գլխի կանոններով, Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1/. «ԲԵՍՏՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցադիմումն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ մասնակի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով, Երևանի քաղաքապետի պաշտոնակատարի 10.04.2023 թվականի թիվ 770-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել Դատարանի վարույթ:

2/. Գործը քննել գրավոր ընթացակարգով՝ առանց դատական նիստ հրավիրելու:

3/. Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2023 թվականի հունիսի 19-ին «DataLex» դատական տեղեկատվական համակարգի միջոցով (պաշտոնական կայքը՝ datalex.am):

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ՝ Հովհաննես Ղազարյան